ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

24.03.2023թ.
No 01/01-370

«Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ի
Տնօրեն Արա Սարգսյանին
(հասցե ք. Երևան Ագաթանգեղոսի)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հարգելի պարոն Սարգսյան.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 21.02.2023թ կնքված N ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-23/ԷԱԲԾ-1-1 գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագրի) շրջանակներում «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ն 4 չափաբաժինների մասով պետք է իրականացներ էլեկտրոնային ամսագրերի բաժանորդագրման ծառայությունները՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առնվազն 20 օրացույցային օր հետո, (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում), սակայն 2 չափաբաժինների մասով («Academy of management Journal» և «China Economic Rewiew» էլեկտրոնային ամսագրեր բաժանորդագրման ծառայությունները) 22.03.2023թվականի դրությամբ չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ) երթակետը (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի մասնակի լուծեում է պայմանագիրը չկատարված ծառայությունների մասով:

Տեղեկացնում ենք, որ «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարաության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին փոխանցել **1196 ՀՀ դրամ որպես տույժ**՝ Պայմանագրի 5.3 կետի համաձայն: Տույժը հաշվարկված է մինչև 22.03.2023թ.:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարատավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:**

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ ՝պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագի կատարման ապահովման** գումարը կազմում է **29.900** (քսանինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ և **որոկավորման ապահովման գումարը** կազմում է **44.850** (քառասունչորս հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թվականի մարտի 30-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. ապրիլի 4-ը ներառյալ ներկայացնել ՀՊՏՀ-ի գնումների բաժին:

Ռեկտոր՝ _____ **Դ. Գալոյան**

Կատարող գնումներ համակարգող
Գոհար Թադևոսյան հեռ.593-483

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, հեռ. +37410 521720